ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 դեկտեմբերի 2018 թվականի N 195-Ա

«ՏԻԳԱՐԲՈ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՈՎՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 99 և 2018 թվականի հունիսի 07-ին և նոյեմբերի 16-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 1391, Ե/2777 և Ե/2777.1 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ Ֆ-177/18 գրությունը, «Տիգարբո» ՍՊԸ-ի 2018 թվականի նոյեմբերի 12-ի գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Տիգարբո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՍՊԸ)՝ ՀՀ Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտադացիտների հանքավայրում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2013 թվականի փետրվարի 15-ի օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/389 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- գործողության ժամկետը տողում՝ «2011թ հոկտեմբերի 14-ից մինչև 2036թ հոկտեմբերի 14-ը» բառերը փոխարինել «50 տարի» բառերով,
- հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 27900.0 մ³ արդյունահանվող պաշար,
- տրամադրվող պաշարների քանակը՝ 1500380.0 մ³ ըստ A+B+C₁ կարգի,
- ՀՀ Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտադացիտների հանքավայրում արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի՝ 1.X=4466296 Y=8462313 H=1405.0 h(-21.0), 2.X=4466463 Y=8462263 H=1423.8.0 h(-25.0), 3.X=4466514 Y=8462368 H=1428.5 h(-16.5), 4.X=4466520 Y=8462500 H=1437.0 h(-23.3) 5.X=4466411 Y=8462555 H=1426.8 h(-34.3) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ 1.X=4466153 Y=8462277, 2.X=4466315 Y=8462202, 3.X=4466371 Y=8462185, 4.X=4466400 Y=8462178, 5.X=4466432 Y=8462171, 6.X=4466439 Y=8462164 7.X=4466449 Y=8462161, 8.X=4466503 Y=8462251, 9.X=4466514 Y=8462402 10.X=4466280 Y=8462507, 11.X=4466170 Y=8462452, 12.X=4466143 Y=8462422 13.X=4466151 Y=8462348, 14.X=4466160 Y=8462319 (տրված են WGS-84 ՎԻ ՋԻ ԷՍ-84 ARMREF 02 ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածք և լեռնահատկացման թիվ ԼՎ-389 լեռնահատկացման ակտի՝ 1. X=165420 Y=103480 H=1403.0(h=-19.5), 2.X=164963 Y=103416 H=1403.0(h=-19.5), 3.X=165078

Y=103658 H=1427.0.0(h=-18.0), 4.X=164954 Y=103714 H=1410.0(h=-7) 5.X=164787 Y=103636 H=1391.0(h=-24.0), 6.X=164833 Y=103520 H=1412.0(h=-24.0) կոորդինատները փոխարինել՝ 1.X=4466153 Y=8462277, 2.X=4466024 Y=8462300, 3.X=4466095 Y=8462130, 4.X=4466191 Y=8462121, 5.X=4466241 Y=8462098, 6.X=4466324 Y=8462059 7.X=4466370 Y=8462090, 8.X=4466339 Y=8462125, 9.X=8462196 Y=4466337 10.X=4466371 Y=8462185, 11.X=4466400 Y=8462178, 12.X=4466432 Y=8462171, 13.X=4466439 Y=8462164 14.X=4466449 Y=8462161, 15.X=4466503 Y=8462251, 16.X=4466514 Y=8462402 17.X=4466280 Y=8462507, 18.X=4466170 Y=8462452, 19.X=4466143. Y=8462422, 20.X=4466151 Y=8462348, 21.X=4466160 Y=8462319, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով:

2.Կատարել փոփոխություն ՀՀ Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտադացիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-389 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1)օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում փոփոխություն կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2)ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված տարբերակները,

3)ծանուցել ՍՊԸ-ին, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

12/28/2018

X

VERIFIED OCSP 28-Dec-18 16:37:18 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118